

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ Ուսումնասանթողական վարչության մագիստրատուրայի բաժնում փաստաթղթերի ընդունելություն չի իրականացվում: ԵՊՀ 2021/2022 ուստարվա ընդունելության փաստաթղթերն ընդունվում են առցանց <https://admission.ysu.am/home> կայքի միջոցով:

**1-ին փուլի** (ընդունելության կարգի 6-րդ կետ) փաստաթղթերն ընդունվում են ընթացիկ տարվա **հունիսի 1-ից** մինչև **հուլիսի 1-ը** :

2021թ. Ազգային Բանակից տարկետում ստացած մագիստրատուրայի դիմորդները պետք է դիմումը ներկայացնեն մինչև ընթացիկ տարվա **հունիսի 20-ը**:

Ընդունելության 1-ին փուլի (ընդունելության կարգի 6-րդ կետ) քննություններն անկացվում են **ա.թ. հուլիսի 5-ին և 6-ին**:

Ընդունելության 1-ին փուլում անվճար համակարգ ընդունված դիմորդների ցանկը կայքում կտեղադրվի **ա.թ. հուլիսի 14-ին**:

**2-րդ փուլի** (ընդունելության կարգի 7-րդ կետ) փաստաթղթերն ընդունվում են ընթացիկ տարվա **հուլիսի 12-ից** մինչև **օգոստոսի 20-ը**: 2-րդ փուլի ընդունելության քննություններն անկացվում են **ա.թ. օգոստոսի 26-ին և 27-ին**:

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի՛ դիմորդ,

ԵՊՀ <Իրավագիտություն> մասնագիտության առկա և հեռակա ընդունելության մրցույթներին կարող են մասնակցել միայն <Իրավագիտություն> մասնագիտությամբ (դիպլոմի մեջ պետք է գրված լինի **Իրավագիտություն**) իրավագիտության բակալավրի որակավորում ունեցող շրջանավարտները:

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի՛ դիմորդ,

ԵՊՀ <Ֆարմացիա> մասնագիտության ընդունելության մրցույթին կարող են մասնակցել միայն <Դեղագիտություն>, <Դեղագործական քիմիա>, <Բուժական գործ> մասնագիտությունների բակալավրիատի շրջանավարտները: Հայտեր կարող են ներկայացնել նաև **հարակից** մասնագիտությունների շրջանավարտները, սակայն դիպլոմի հավելվածում պարտադիր պետք է ներառված լինեն հետևյալ դասընթացները:

- Օրգանական կամ կենսօրգանական քիմիա
- Անալիտիկ քիմիա
- Ֆիզիկական կամ կոլոիդ քիմիա
- Ընդհանուր կենսաբանություն
- Կենսաքիմիա
- Բուսաբանություն
- Ֆիզիոլոգիա և անատոմիա

Հարակից մասնագիտությունների համար հավելյալ կարող եք գրել [pharmacy@ysu.am](mailto:pharmacy@ysu.am) էլ. հասցեին: